Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ռ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

Պատմության մատերիալիստական ըմբռնման շնորհիվ առաջին անգամ հնարավորություն ընձեռվեց պատմականորեն ուսումնասիրել անհատի պրոբլեմը։ Կ. Մարքսը «Սուրբ ընտանիք» աշխատության մեջ կոմունիզմը համարում է ռևալ հումանիզմ, որի պայմաններում միայն հնարավոր է յուրաքանչյուր անհատի լիակատար ազատությունը և ծաղկումը։ Բնութագրելով կոմունիզմը՝ Ֆ. Էնգելսը գրում է. «Կոմունիստական սկզբունքներով կազմակերպված հասարակությունն իր անդամներին հնարավորություն կտա բազմակողմանի կերպով կիրառելու իրենց բազմակողմանիորեն զարգացած ունակությունները»[1]։

Հակադրվելով այն սոցիոլոգներին, որոնք անհատը գիտում էին որպես բնականորեն ձևավորված հոգևոր էակ, որը բնութագրվում է սոսկ բիոլոգիական հատկանիշներով, Վ. Ի. Լենինն անհատին ուսումնասիրում է պատմական որոշակի հարաբերությունների և կապերի մեջ։ Նա վճռականորեն դատապարտում է անհատի պրոբլեմի նախափորձային սահմանման բոլոր տենդեցները, դրանք դիտելով «իդեալիստական անմտություն», որը նպատակ ունի «մերժելու մարքսիզմն ամբողջությամբ, սկզբից իսկ, նրա փիլիսոփայական ամենահիմնական նախադրյալներից»[2]։

Վ. Ի. Լենինը բացահայտում է սոցիոլոգ Միխայլովսկու բուրժուական հայացքների հակագիտական բնույթը, ըստ որի հասարակությունը, իբր, գոյություն ունի ընդհանրապես անհատի մեջ և նրա միջոցով։ «Սոցիոլոգ-մատերիալիստը,— գրում է Վ. Ի. Լենինը,— որ իր ուսումնասիրության առարկա է դարձնում մարդկանց հասարակական որոշ հարաբերությունները, սրանով իսկ արդեն ուսումնասիրում է նաև ռեալ անհատներին, որոնց գործողություններից էլ գոյանում են այդ հարաբերությունները»[3]։ Հասարակությունը և անհատը երկու տարանջատակ գործոններ չեն, այլ դիալեկտիկորեն փոխկապակցված սկիզբներ։ Եթե անհատը կոնկրետ պատմական-հասարակական հարաբերությունների կրողն է և մարմնավորողը, ապա հասարակությունն էլ՝ հենց մարդկանց փոխազդեցության արդյունքն է։ Կ. Մարքսը գրում է. «Մարդկության իսկական գործողություններն այլ բան չեն, քան մարդկային անհատների մասսայի գործողությունը»[4]։

Բացահայտելով անհատի սոցիալական էությունը, Վ. Ի. Լենինն ընդգծում էր Մարքսի և Էնգելսի «Սուրբ ընտանիք» աշխատության այն հատվածը, որտեղ նշվում է, որ առարկան, *որպես* կեցություն մարդու համար, *որպես* մարդու առարկայական կեցություն, *միևնույն ժամանակ* մարդու անկա կեցությունն է մյուս մարդու համար, *նրա* մարդկային հարաբերությունն է մյուս մարդու նկատմամբ, մարդու հասարակական հարաբերությունն է մարդու

1 Ֆ. Էնգելս, Կոմունիզմի սկզբունքները, Երևան, 1959, էջ 35։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 14, էջ 426։
3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 1, էջ 514։
4 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 2, М., 1955, стр. 93.

նկատմամբ»[5]։ Ուստի, անհատի բովանդակությունը դառնում է սոցիալական իմաստ ունեցող փաստ՝ դրսևորվելով միայն առարկայացած մտքերի ու զգացմունքների մեջ։ Վ. Ի. Լենինն անհատին քննում է որպես սուբյեկտի և օբյեկտի դիալեկտիկական միասնություն։ Նա գրում է. «Այլ կերպ, մարդու գիտակցությունը ոչ միայն արտացոլում է օբյեկտիվ աշխարհը, այլև կերտում այն»[6]։

Վ. Ի. Լենինը բացահայտում է անհատի բովանդակությունը որպես առարկայացված սուբյեկտ՝ կապված հեգելյան «հասկացություն» (der Begrif) տերմինի բացատրման հետ։ «Հասկացությունը (=մարդը), որպես սուբյեկտիվ, նորից ենթադրում է ինքն իր մեջ գոյավոր այլակեցություն (=մարդուց անկախ բնություն)։ Այդ հասկացությունը (=մարդը) մի ձգտում է՝ ռեալիզացնելու իրեն, իր իսկ միջոցով օբյեկտիվություն տալու իրեն օբյեկտիվ աշխարհում և կենսագործելու (իրականացնելու) իրեն»[7]։

Այն, ինչ Հեգելն անվանում է տեսական իդեաներ,— դա օբյեկտիվի սուբյեկտիվացումն է։ Ըստ Վ. Ի. Լենինի բնութագրման՝ այստեղ նկատի է առնվում անհատի որպես սուբյեկտի ձևավորումը, որը դեռևս քողարկված է հասարակությունից և «ինքն իր մեջ և ինքն իր համար կեցություն է»։ Դա անհատի բնորոշման մի կողմն է, այսպես կոչված իրականության անհատական արտացոլումը՝ հատուկ յուրաքանչյուր անհատին։ Սակայն, նա գործող, հասարակության կողմից իրականում ընկալվող և գնահատվող անհատ է դառնում ամենօրյա գործունեության մեջ՝ իրեն դրսևորելով որպես անհատ աշխատանքի մեջ։

Վ. Ի. Լենինը հիմնավորեց սոցիալիստական հեղափոխության գաղափարը, «առանց որի խոսք անգամ չի կարող լինել իսկական ազատության մասին մարդկային անձնավորության համար»[8]։ Միայն սոցիալիստական հեղափոխությունն է կարող իրագործել մարդու ազատագրումը շահագործումից, սոցիալական ճնշումից և ստեղծել անհատի ազատ ու ներդաշնակ զարգացման հնարավորություններ։ Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին Վ. Ի. Լենինը գրում էր. «Իսկապես միմիայն սոցիալիզմից է սկսվելու արագ, իրական, իսկապես մասսայական, բնակչության մեծամասնության, ապա նաև ամբողջ բնակչության մասնակցությամբ տեղի ունեցող առաջընթաց շարժումը հասարակական ու անձնական կյանքի բոլոր ասպարեզներում»[9]։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Վ. Ի. Լենինը նշում էր, որ անհրաժեշտ է անցնել «...բազմաձողմանի զարգացած ու բազմաձողմանի պատրաստված մարդկանց դաստիարակությանը, ուսուցմանը և պատրաստմանը, որոնք կարողանում են ամեն ինչ անել»[10]։ Սոցիալիզմը հնարավորություն է տալիս «իրոք աշխատավորների մեծամասնությանը ներգրավելու այնպիսի աշխատանքի ասպարեզը,— գրում է Վ. Ի. Լենինը,— որտեղ նրանք կարող են երևան բերել իրենց, ծավալել իրենց ընդունակությունները, դրսևորել տաղանդներ, որոնք ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են և որոնց կապիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել է հազարներով ու միլիոններով»[11]։ Սոցիալիստական հասարակության անհատը որքան խորն է յու-

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 38, էջ 15։
6 Նույն տեղում, էջ 260։
7 Նույն տեղում, էջ 260—261։
8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 493։
9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 615։
10 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 43։
11 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 493—494։

բացնում կոնկրետ պատմական-հասարակական հարաբերությունները, այնքան նրա ներքնաշխարհը դառնում է հարուստ ու բազմազան։ Կ. Մարքսը նշել է. «Անհատի իսկական հոգևոր հարստությունն ամբողջովին կախված է նրա իրական հարաբերությունների հարստությունից»[12]։

Վ. Ի. Լենինը սոցիալիստական հասարակության և անհատի ներդաշնակ զարգացման որոշիչ գործոն էր համարում աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի դաստիարակությունը, նա գտնում էր, որ գիտակից աշխատանքից և հասարակական գործունեությունից դուրս չկա և չի կարող լինել կոմունիստական դաստիարակություն։ Նա ընդգծում էր, որ սոցիալիզմի օրոք «ուրիշի համար հարյուրամյակներ աշխատելուց, շահագործողների համար հարկադրական աշխատանք կատարելուց հետո առաջին անգամն է հնարավորություն ստեղծվում իր համար աշխատելու, այն էլ այնպիսի աշխատանքի հնարավորություն, որը հենվում է նորագույն տեխնիկայի և կուլտուրայի բոլոր նվաճումների վրա»[13]։ Սոցիալիստական աշխատանքը մարդու բարոյական հատկություններին, ստեղծագործական ուժերի և հմտությունների զարգացման հիմքն է, որի մեջ բացահայտվում է յուրաքանչյուր անհատի անհատականությունը։ Ստեղծագործ աշխատանքն այն հիմնական միջոցն է, որի շնորհիվ կարելի է «...հաղթահարել սեփական անշարժությունը, սանձարձակությունը, մանրբուրժուական էգոիզմը,— այդ սովորությունները, որ անիծյալ կապիտալիզմը ժառանգություն է թողել բանվորին և գյուղացուն»[14]։

Ստեղծագործ աշխատանքի նկատմամբ յուրաքանչյուր աշխատավորի նոր վերաբերմունքի մեջ Վ. Ի. Լենինը տեսնում էր կոմունիզմի ծիլերը, նրա փաստական սկիզբը. «Կոմունիզմը սկսվում է այնտեղ, որտեղ երևան է գալիս շաբաթային բանվորների անձնվեր, ծանր աշխատանքը հաղթահարող հոգսը՝ բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, պահպանելու յուրաքանչյուր փութ հացը, ածուխը, երկաթը և այլ մթերքներ, որոնք հասնում են ո՞չ թե անձնապես աշխատողներին և ո՞չ թե նրանց «մերձավորներին», այլ «հեռավորներին», այսինքն՝ ամբողջ հասարակությանը»[15]։ Վ. Ի. Լենինը միաժամանակ բացահայտեց կոմունիստական աշխատանքի երկիմաստ բնույթը։ Լայն իմաստով կոմունիստական աշխատանքը բարեխիղճ վերաբերմունքն է դեպի աշխատանքը՝ սոցիալիստական սկզբունքների հաշվառման և հսկողության շրջանակներում։ Իսկ կոմունիստական աշխատանքը նեղ իմաստով նշանակում է սահմանված նորմաներից դուրս կամավոր, անվճար աշխատանք, «որը կատարվում է ընդհանուրի օգտին աշխատելու սովորությամբ և ընդհանուրի օգտին աշխատանքի անհրաժեշտության նկատմամբ գիտակից (արդեն սովորություն դարձած) վերաբերմունքով, մի աշխատանք, որ պահանջմունք է առողջ օրգանիզմի համար»[16]։

Անհատն իր սոցիալական դերը գործնականում կարող է իրականացնել միայն կոլեկտիվում։ Սոցիալիստական աշխատանքային կոլեկտիվը հասարակական և անձնական շահերի կապող օղակն է։ Կոլեկտիվիզմը, որպես

---

12 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Соч., т. 3, стр. 36.

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 495։

14 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 503—504։

15 Նույն տեղում, էջ 524։

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 661։

բանվոր դասակարգի բարոյական բնորոշ գիծ, անհատի և հասարակության դիալեկտիկական միասնության վճռական գործոնն է։ Մարքսն ու Էնգելսը գտնում են, որ «միայն կոլեկտիվում է անհատը ստանում այն միջոցները, որոնք հնարավորություն են տալիս նրա ձիրքերի բազմակողմանի զարգացմանը, և, հետևաբար, միայն կոլեկտիվում է հնարավոր անձնական ազատությունը»[17]։

Սոցիալիզմի օրոք հասարակական և անձնական շահերի ներդաշնակ զարգացումը դրսևորվում է նրանում, որ անհատի ցանկություններն ու ձգտումները միաժամանակ հասարակական պահանջմունքների արտահայտությունն են։ Վ. Ի. Լենինը ուսուցանում էր, որ նոր հասարակարգ կարելի է կառուցել «ոչ թե անմիջական խանդավառության վրա հենվելով, այլ մեծ հեղափոխության ստեղծած խանդավառության օգնությամբ, հենվելով անձնական շահի, անձնական շահագրգռվածության, տնտեսական հաշվարկի վրա... այլ կերպ,— այնուհետև ընդգծել է նա,— դուք չեք մոտենա կոմունիզմին, այլ կերպ տասնյակ ու տասնյակ միլիոնավոր մարդկանց չեք մոտեցնի կոմունիզմին»[18]։ Վ. Ավանեսովին ուղղված նամակում նա կրկին շեշտում է այդ սկզբունքի կարևորությունը. «Առանց անձնական շահագրգռվածության ոչինչ չի ստացվի։ Պետք է կարողանալ շահագրգռել»[19]։

Թեև սոցիալիզմը վերացնում է մարդկանց շահերի միջև եղած կոնֆլիկտը, բայց ամբողջությամբ չի հաղթահարում անհատի և հասարակության միջև գոյություն ունեցող հակասությունները։ Ծագելով կապիտալիզմի ընդերքից, սոցիալիստական հասարակարգն իր վրա կրում է հին հասարակության դրոշմը։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ անհրաժեշտ է ոչ թե կյանքի, այլ մահու պատերազմ մղել աշխատավորության թշնամիների՝ պորտաբույծների, խաբեբաների, խուլիգանների նկատմամբ։ Ըստ Վ. Ի. Լենինի՝ «այդ տեսակետից ամեն մի վարանում, ամեն մի թուլություն, ամեն մի սենտիմենտալ վերաբերմունք մեծագույն ոճրագործություն կլիներ սոցիալիզմի հանդեպ»[20]։ Վ. Ի. Լենինը զայրույթով էր արտահայտվում հատկապես կաշառակերների վերաբերյալ և պահանջում հետևողական պայքար մղել «կապիտալիզմի այդ ավանդապահների» դեմ։ Նա սովորեցնում էր, որ «կաշառակերներին պետք է ճեռապնդել հասարակական կարծիքի դատարանով և հեռացնել կուսակցությունից, որովհետև նրանց տեղը Կերենսկիների կամ Մարտովների կողքին է և ոչ թե հեղափոխական-կոմունիստների կողքին»[21]։

Վ. Ի. Լենինը մարդու դաստիարակությունը կապում էր սոցիալիստական գիտակցության աճի, կրթության և կուլտուրայի մակարդակի բարձրացման հետ։ Նա գրում է. «Առաջ ամբողջ մարդկային խելքը, նրա ամբողջ հանճարն ստեղծագործում էր միմիայն նրա համար, որպեսզի մի կարգ մարդկանց տա տեխնիկայի և կուլտուրայի բոլոր բարիքները, իսկ մյուսներին զրկի ամենաանհրաժեշտից՝ լուսավորությունից ու զարգացումից։ Իսկ այժմ տեխնիկայի բոլոր հրաշքները, կուլտուրայի բոլոր նվաճումները դառնալու են համաժողովրդական սեփականություն և այսուհետև մարդկային խելքն ու

17 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, стр. 75.
18 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 46։
19 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 36, էջ 639։
20 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 5[illegible]
21 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 391։

հանձարը էլ երբեք բռնության միջոցների, շահագործման միջոցների չեն վերածվի»[22]։

Սոցիալիստական հասարակության անհատի հոգևոր հարստությունը բնութագրվում է գիտական աշխարհայացքով, գաղափարական խոր համոզվածությամբ, քաղաքական ու պոլիտեխնիկական լայն պատրաստվածությամբ, ներքին և արտաքին բարձր կուլտուրայով, կոմունիստական բարոյականությամբ և դեղագիտական բարձր ճաշակով։ Սոցիալիզմի օրոք մարքս-լենինյան գաղափարախոսությունը հանդիսանում է անհատի հոգևոր հարստության զարգացման մշտական աղբյուր։ Վ. Ի. Լենինը կուլտուրայի բնագավառում մարդու օտարումը հաղթահարելու համար գտնում էր, որ «հարկավոր է վերցնել ամբողջ կուլտուրան, որ կապիտալիզմը թողել է, և նրանից սոցիալիզմ կառուցել։ Հարկավոր է վերցնել ամբողջ գիտությունը, տեխնիկան, բոլոր դիտելիքները, արվեստը։ Առանց այս բանի մենք չենք կարող կոմունիստական հասարակության կյանքը կառուցել»[23]։

Սոցիալիստական հասարակության անհատի բազմակողմանի զարգացման, նրա հոգևոր հարստացման կարևոր պայմանը Վ. Ի. Լենինը համարում էր պոլիտեխնիկական կրթությունը։ Ըստ նրա՝ «չի կարելի պատկերացնել ապագա հասարակության իդեալն առանց ուսուցումը միացնելու երիտասարդ սերնդի արտադրողական աշխատանքի հետ. ոչ ուսուցումն ու կրթությունը առանց արտադրողական աշխատանքի, ոչ արտադրողական աշխատանքն առանց զուգահեռ ուսուցման ու կրթության չեն կարող դրվել այն բարձրության վրա, որ պահանջում են տեխնիկայի արդի մակարդակը և գիտական իմացության վիճակը»[24]։

Վ. Ի. Լենինը մասսաներին կուլտուրայի նվաճումներին մասնակից դարձնելու էական պայման էր համարում գյուղի և քաղաքի հակադրության վերացումը։ Եվ, ըստ նրա, վերջինս անհրաժեշտ է «որպեսզի ոչնչացնենք գյուղական բնակչության միլիոնների այն խորթությունը կուլտուրայից, որ Մարքսն անվանել է «գյուղական կյանքի իդիոտիզմ»[25]։ Նա մասսաների ձեռք բերած գիտելիքների մեջ տեսնում էր նոր հասարակարգի կառուցման զենքը։ Եվ պատահական չէ, որ նոր մարդու կոմունիստական դաստիարակության գլխավոր խնդիրը նա համարեց՝ «սովորել կոմունիզմ»։ Վ. Ի. Լենինը գտնում էր, որ նոր մարդու ձևավորումը վերջին հաշվով կախված է նրանից, թե կոմունիստական գաղափարները որքանով խորն են թափանցում յուրաքանչյուր մարդու գիտակցության մեջ, դառնում անհատի բարոյական հատկություններին հիմքում ընկած ներքին համոզմունքներ։ Նա կոմունիստական բարոյականության դաստիարակությունը համարում էր մարդու, նրա երջանկության և բազմակողմանի զարգացման կարևոր պայման և մշակեց մարդու վարքագծի բարոյական գնահատականի հիմնական չափանիշը։ «Կոմունիստական բարոյականության հիմքում ընկած է կոմունիզմն ամրապնդելու և ավարտելու պայքարը»[26],— հայտարարեց նա երիտասարդական միությունների III համագումարում։

Կոմունիստական բարոյականությունը պահանջում է անհանդուրժողա-

22 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 559—560։
23 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 39, էջ 66—67։
24 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 602—603։
25 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 361։
26 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 357։

կան վերաբերմունք անարդարության, պորտաբուծության, անազնվության, շահամոլության և այլնի նկատմամբ։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ բարոյականության բնագավառում անձի ազատությունը պետք է անբաժանելի լինի հասարակական պարտքի գիտակցումից։ Ազատ է այն մարդը, ով գործում է՝ ելնելով իր արարքի հասարակական արժեքի ներքին ըմբռնումից։ Բարոյական անաղարտության պահանջը չպետք է ըմբռնել որպես առօրյա միամտություն, որպես կենցաղային «մեղքերից» խուսափում, այլ դեպի մարդը, շրջապատը բարոյական բարձր մակարդակի վերաբերմունք, ճշմարտություն, անկեղծություն, շիտակություն վարքագծում և արարքներում։

Վ. Ի. Լենինը սոցիալիստական հասարակության անհատի ներդաշնակ զարգացման պայման էր համարում պրոլետարական դեմոկրատիայի համակողմանի զարգացումը։ Նա սովետական իշխանության հենց առաջին օրը հայտարարեց. «Ընկեր-աշխատավորնե՛ր։ Հիշեցեք, որ այժմ դուք ինքներդ եք կառավարում պետությունը։ Ոչ ոք ձեզ չի օգնի, եթե դուք ինքներդ չմիանաք և պետության բոլոր գործերը ձեր ձեռքը չվերցնեք»[27]։ Ռ(բ)Կ VIII համագումարում Վ. Ի. Լենինը հպարտությամբ ասում էր. «Ոչ ոք չի ժխտի, որ իսկական և ոչ թե թղթե դեմոկրատիայի համար, բանվորներին և գյուղացիներին ներգրավելու համար մենք արել ենք այնքան, որքան հարյուրավոր տարիներում չեն արել ամենալավագույն դեմոկրատական հանրապետությունները և չէին կարող անել»[28]։ Վ. Ի. Լենինը սոցիալիստական դեմոկրատիայի մեջ տեսնում էր սոցիալիզմի վիթխարի առավելությունը բուրժուական հասարակարգի հանդեպ։ Նա գրում էր. «Մենք ունենք մի «հրաշալի միջոց» իսկույն, մի հարվածով տասնապատկելու մեր պետական ապարատը,— մի միջոց, որպիսին ոչ մի կապիտալիստական պետություն ոչ մի ժամանակ չի ունեցել իր տրամադրության տակ և ունենալ չի կարող։ Այդ հրաշալի գործը աշխատավորներին, չքավորներին պետության կառավարման ամենօրյա աշխատանքին մասնակից դարձնելն է»[29]։

Սոցիալիստական դեմոկրատիայի պատմական կոչումը Վ. Ի. Լենինը տեսնում էր կոմունիզմի կառուցմանը, աշխատավորների բազմակողմանի զարգացմանը ծառայելու մեջ։ Նա նշում էր, որ հասարակական գործերի կառավարմանը յուրաքանչյուրի ակտիվ մասնակցությունը մարդկանց մոտ մշակում է ավելի լայն մտահորիզոն, իրադարձությունների ավելի խոր ըմբռնում, նպատակների ճիշտ գիտակցում, սովորեցնում է վարքագծի ընդհանուր կանոնները, անձնական ձգտումներն ու ցանկությունները զուգակցել հասարակական շահերի հետ։

Վ. Ի. Լենինը ընդգծում էր, որ անհատի ազատության աստիճանը կախված է հասարակության ազատության աստիճանից, իսկ վերջինս որոշվում է հասարակական արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման մակարդակով, հասարակության սոցիալական կառուցվածքով։ Անհատի ազատությունը դրսևորվում է նրանում, որ մարդը իշխում է այն հարաբերությունների և հանգամանքների վրա, որոնցում նա ապրում է։ Ազատ լինել գործողությունների, վարքագծի, վարմունքի մեջ, նշանակում է

27 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 359։
28 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 215—216։
29 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 120։

անձնական բազմաթիվ նպատակներից գիտակցաբար ընտրել այն, ինչ միաժամանակ հանդիսանում է նաև հասարակական պահանջ։ Հետևաբար, ազատությունը սանձարձակություն չէ,— ինչպես փորձում են պատկերել կապիտալիզմի գաղափարախոսները։ Ազատության աղբյուրը ոչ թե մարդու զգացմունքների և բնազդների մեջ է, այլ այն բանի գիտակցման մեջ, ինչ նպաստում է հասարակական առաջադիմությանը։

Մարդու ազատությունն անբաժանելի է նրա պատասխանատվությունից, որը և անհատի հասարակական դերի իրացումն է։ Թեև անհատը որոշումներ է ընդունում իր կամքի համաձայն, բայց նա պետք է պատասխանատու լինի այն բանի համար, թե համընկնո՞ւմ է, արդյոք, իր վարքագիծը հասարակական շահերին, թե՞ ոչ։ Ուստի պատասխանատվությունն անհատի ազատության պայմանն է, նրա ազատ գործունեության զարգացման բաղկացուցիչ մասը։

Վ. Ի. Լենինն ուշադրություն է դարձնում հարցի երկու կողմերի վրա՝ ա) բոլոր մարդկանց միջև հասարակության ղեկավարման պարտականությունների բաժանում և՝ բ) ընդհանուրի ճակատագրի համար պատասխանատվության դաստիարակում։ Հետևաբար, սոցիալիստական հասարակության անհատի իսկական ազատությունը կայանում է ոչ թե համակեցության նորմերից հրաժարվելու կամ անտեսելու, այլ դրանց գիտակից կատարման մեջ, երբ դրանք վերածվում են անձնական խոր համոզմունքների, վարքագծի մշտական կանոնների։ Սոցիալիզմի օրոք անհատի պատասխանատվության աստիճանը կախված է նրա գաղափարական զարգացման մակարդակից, մարդու ինքնահսկման քաղաքական գիտակցությունից։ Հարկավոր է, ուսուցանում էր Վ. Ի. Լենինը, որ «գիտակից բանվորը իրեն զգա ոչ միայն տեր իր գործարանում, այլ որպես երկրի ներկայացուցիչ, որ նա իր վրա զգա պատասխանատվություն»[30]։

Անհատի վերաբերյալ Վ. Ի. Լենինի գաղափարներն իրենց մարմնավորումը ստացան սոցիալիստական հասարակության հետագա զարգացման պրոցեսում։ Սոցիալիզմի կառուցման պատմությունը հենց անհատի անշեղ աճի, նրա քաղաքական ակտիվության, հոգևոր հարստության և աշխատանքային հմտությունների կատարելագործման պատմությունն է։

Այսօր առավել ևս մեծացել է մեր կուսակցության և պետության ուշադիր վերաբերմունքը սոցիալիստական հասարակության անհատի, նրա ձիրքերի և ստեղծագործական ուժերի զարգացման նկատմամբ։ Դա պայմանավորված է մեր հասարակության զարգացման հեռանկարներով, նոր մարդու դաստիարակության պրակտիկ խնդիրներով։ Այժմ այդ «հարցը ղեկավարելն ավելի լայն է դրվում՝ ստեղծել սովետական մարդկանց, բոլոր աշխատավորների ընդունակությունների, ստեղծագործական ակտիվության համակողմանի զարգացմանը նպաստող պայմաններ, այսինքն՝ զարգացնել հասարակության գլխավոր արտադրողական ուժը»[31]։ Պայքարել կոմունիզմի գաղափարների կենսագործման համար, նշանակում է պայքարել հանուն մարդու, նրա արժանապատվության և երջանկության։ Կոմունիստական շինարարության խնդիրները կարելի է հաջողությամբ լուծել այն դեպքում, երբ դրանց իրագործման հա-

30 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 500։

31 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցումը ՍՄԿԿ XXIV համագումարին, Երևան, 1971, էջ 64։

մար սովետական յուրաքանչյուր քաղաքացի նվիրաբերի իր բոլոր ուժերը, էներգիան, կամքը և բանականությունը։

Կոմունիզմին անցմամբ աստիճանաբար կվերանան դասակարգային, սոցիալական, տնտեսական ամենաչնչին տարբերությունները, կստեղծվեն բոլոր անհրաժեշտ նախադրյալները յուրաքանչյուր անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման, նրա ձիրքերի և ունակությունների աղատ ծավալման համար։ Ամենակատարյալ և արդարացի հասարակության կառուցումը կլինի որակապես նոր աստիճան հասարակության և անհատի փոխհարաբերության մեջ։ «Կոմունիզմն այն հասարակարգն է, որտեղ ծաղկում և լրիվ դրսևորվում են մարդու ընդունակություններն ու տաղանդները, նրա լավագույն բարոյական հատկությունները»[32]։

Կոմունիզմի կառուցումը պահանջում է սովետական ժողովրդի կյանքն ու կենցաղն ամբողջովին մաքրել մասնավոր սեփականատիրական հոգեբանության և բարոյականության բոլոր մնացուկներից, եսամոլությունից և ազգայնամոլությունից, կրոնական նախապաշարումներից, բյուրոկրատիզմից, շահամոլությունից և անսկզբունքայնությունից, կեղծիքից և զրպարտությունից, փառամոլությունից և քաղքենիական անտարբերությունից,— այն ամենից, ինչ խոչընդոտում են մարդկանց ունակությունների, նախաձեռնության և ստեղծագործական ակտիվության զարգացումը։ Կոմունիստական հասարակական հարաբերությունների պայմաններում «մարդը կազատագրվի նրա ընդունակությունները սահմանափակող կենցաղային, նյութական, սոցիալական, կուլտուրական բոլոր տարրերից և միակ բանը, որ կհրապուրի նրան, կլինի ստեղծագործությունը, նրա բոլոր ունակությունների զարգացումը ի բարօրություն հասարակության և սեփական բավարարման»[33]։

В. И. ЛЕНИН О ВЗАИМООТНОШЕНИИ СОЦИАЛИСТИЧЕСКОГО ОБЩЕСТВА И ЛИЧНОСТИ

Р. А. АВАКЯН

Резюме

Говоря о диалектическом единстве личности и общества, В. И. Ленин выделяет факторы, которые необходимы в процессе формирования и развития личности в социалистическом обществе. Он, в частности, подчеркивает роль трудового воспитания в деле формирования и укрепления научного мировоззрения и коммунистической морали нового человека.

Создание естественных и гармонических взаимоотношений между социалистическим обществом и личностью В. И. Ленин связывает с сочетанием общественных и личных интересов, ростом социалистической сознательности, повышением уровня образования и культуры и достижением действительной свободы личности.

---

32 Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագիրը, Երևան, 1962, էջ 79։
33 «Коммунизм и личность», М., 1964, стр. 338—339.